

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ՆՐԱՆՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱԶՈՐՆԵՐԻ ՀԱՐՑԸ**

**Բ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

Նոր և նորագույն փոխառությունները կազմում են արդի գրական հայերենի արևելաֆայ տարբերակի բառապաշարի բաղկացուցիչ մասը:

Փոխառությունները իբրև հետևանք ժողովուրդների տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի՝ լեզվում մուտք գործած նորանոր հասկացություններ, իրություներ նշանակող բառեր են: Այդ եղանակով երկարատև, արգասավոր տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ կապերի շնորհիվ հայոց լեզվում մուտք են գործել և ամրացել օտար շատ բառեր: Փոխառությունները սովորաբար վերաբերում են.

ա) հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական եզրաբառերին.

բ) կենցաղային, տնային գործածության առարկաներին (հագուստեղենի, կոշիկեղենի, ուտելիքի, ճաշատեսակների, կահկարասու, տնային զանազան գործիքների ու սարքերի անվանումներին).

գ) ժողովուրդների անվանումներին.

դ) տեղանուններին, աշխարհագրական անուններին:

Որպես կանոն, խիստ հազվադեպ են փոխառվում լեզվի բառապաշարի հիմքը կազմող հիմնական բառաֆոնդի բառերը, ինչպես և դերանունները, թվականները, հիմնական որակական ածականները և այլն:

Գրական նոր հայերենի բառային փոխառությունները նպատակահարմար է բաժանել նոր և նորագույն շրջանների: Նոր փոխառություններն այն բառերն են, որ արդի հայերենը փոխառել է իր կազմավորման շրջանից մինչև խորհրդային շրջանը (20-ական թվականները) ընկած ժամանակահատվածում: Նորագույն փոխառությունները ամբողջովին վերաբերում են հայերենի կենսագործունեության խորհրդային փուլին:

Նոր փոխառությունները վերաբերում են արդի գրական հայերենի կազմավորման և նրա երկու տարբերակների հետագա կենսագործունեության շրջանին:

ա) Այդ փուլում անմիջական, ուղղակի փոխառությունները կատարվել են հիմնականում եվրոպական լեզուներից, նախ՝ իտալերենից, նոր Ռուսարենից, ֆրանսերենից, հետագայում նաև անգլերենից, գերմաներենից և այլ լեզուներից, նշված լեզուներից այդ կարգի քառային փոխառությունները կատարվել են հիմնականում գրական ճանապարհով և վերաբերում են մշակութային, հասարակական-քաղաքական, վարչատնտեսական կյանքին ու գործունեությանը, գիտատեխնիկական տերմինաբանությանը, եվրոպական ժողովուրդների քաղաքական պատմությանը, հասարակական հարաբերություններին, կենցաղին և այլ բնագավառներին վերաբերող զանազան հասկացություններին:

Եվրոպական փոխառությունների հոսքը մասնավորապես արևելաֆայ գրական լեզվի բառապաշարը նկատելի է դառնում 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած:

բ) Արդի գրական հայերենի կազմավորման շրջանում արևելաֆայ և արևմտաֆայ գրական տարբերակների հիմքը հանդիսացող Երևանի և Պոլսի բարբառներից նշված գրական լեզուների բառապաշարը մուտք են գործել նաև արևելյան փոխառությունները, հիմնականում նոր պարսկերեն, արաբերեն և մասամբ թուրքերեն բառեր:

Այդ կարգի քառային փոխառությունների զգալի մասը արդի գրական լեզվի արևելաֆայ և արևմտաֆայ տարբերակների հետագա կենսագործունեության ընթացքում այդ լեզուների քառային կազմից աստիճանաբար դուրս մղվեցին հայերեն նորակազմությունների շնորհիվ:

Եվրոպական լեզուներից և հատկապես ռուսերենի միջոցով կատարվող փոխառությունները նոր թափ և ծավալ են ստանում 19-րդ դարի երկրորդ կեսերից սկսած և շարունակվում են ծավալվել առ այսօր:

Նախախորհրդային և հատկապես խորհրդային շրջանում հայերենը քառային փոխառու-

թյունները կատարում է ուսերեւելի միջոցով: Այդ տեսակետից զգալի է ուսերեւելի՝ որպես միջնորդ և փոխառու լեզվի դերը արդի գրական հայերեւելի բառապաշարի լրացման գործում:

Ռուսերեւելից և ուսերեւելի միջոցով կատարվող նորագույն բառային փոխառությունների ցանկը տարբեր է և կարելի է խմբավորել հետևյալ կարգերի.

ա) բուն ուսերեւելի փոխառյալ բառեր, որոնք մեծ թիվ չեն կազմում: Դրանք կյանքին, կենցաղին, ազգային խոհանոցին, հագուստեղենին, մշակույթին, հատկապես երաժշտական գործիքներին վերաբերող բառեր են, որ մտնում են այսպես կոչված էկզոտիկ բառապաշարի մեջ, ինչպես՝ բորձ, շշի, բուկի, բալալայկա, պելմեն, գուալի, խոտոր, կոզակ, դրոժինիկ՝ քիլինա և այլն:

բ) ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներին վերաբերող բառեր, որոնք փոխառվել են ուսերեւելի միջոցով և ուսերեւելի հնչյունական ձևափոխությամբ, ինչպես՝ բանդորա, գոպակ, կորզար, ալին, աու, կումիս և այլն:

Այս կարգերի բառերի որոշ մասը մուտք է գործել արդի գրական հայերեւելի բառային կազմը համապատասխան հայերեն հոմանիշների բացակայության պատճառով:

գ) 19—20-րդ դարերի և հատկապես խորհրդային իշխանության տարիներին եվրոպական տարբեր լեզուներից ուսերեւելի միջոցով արդի գրական արևելահայերեն կատարված և կատարվող հազարավոր փոխառություններ, որոնք վերաբերում են հասարակական և քաղաքական կյանքի, կենցաղի, մշակույթի, գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառներին: Նշված երևույթը առաջին հերթին անհրաժեշտ հետևանքն է ընդհանրապես կյանքի զարգացման, ժողովուրդների և մշակույթների փոխհարաբերության, անխուսափելի շրջման, փոխադարձ հարստացման և մասնավորապես 20-րդ դարի երկրորդ կեսի գիտատեխնիկական հեղաշրջման: Վերջինիս ապացույցն են ավելի քան 10 հազար նորագույն փոխառությունները արդի գրական հայերեւելի արևելահայ տարբերակի բառապաշարում<sup>1</sup>:

Այս կարգի բառերն իրենց բնույթով և գրական լեզվի բառային կազմում գրաված տեսակարար կշռով և արժեքով միատարր չեն: Դրանց զգալի մասը վերաբերում է մասնագիտական տերմինաբանությանը: Դրանք հասարակական և գիտատեխնիկական տարբեր բլենագավառներին վերաբերող այնպիսի հասկացություններ արտահայտող բառային միավորներ են, որոնց մեծ մասը ակտիվ շրջանառության մեջ է գտնվում հատկապես հանրամատչելի գիտատեխնիկական գրականության մեջ, պարբերական մամուլում, որոշ չափով նաև բանավոր խոսքում: Բավական է հիշել հասարակական-քաղաքական հասկացություններ արտահայտող այնպիսի բառեր ու տերմիններ, ինչպես՝ կապիտալ, կապիտալիզմ, կապիտալիստ, սոցիալիզմ, սոցիալիստ, դիկտատուրա, պաշտամենտ, կոնգրես, սենատ, մարկետինգ, մեմենդեր և այլն, կամ քիմիական, շինարարական, տեխնիկական ևն լայն գործածություն ունեցող շատ ու շատ տերմիններ ու բառեր, ինչպես՝ ազոտ, մատրիոն, բարիոն, ֆոսֆոր, քրոմ, ցեմենտ, շիֆեր, քետոն, վազոն և այլն, բժշկության տարբեր բնագավառներին վերաբերող հիվանդությունների անվանումներ և բազմաթիվ դեղանուններ, ինչպես՝ ինֆարկտ, բրոնխիտ, անգինա, ինսուլտ, կամ՝ ինսուլին, վիտամին, ապիրին, ասկոֆեն և այլն:

Փոխառյալ բառերի թվարկման այս համառոտ ցանկին կարելի է ավելացնել նաև մարզական բնագավառին վերաբերող բանավոր և գրավոր խոսքում տարածված այնպիսի բառեր, ինչպես՝ ֆուտբոլիստ, ֆուտբոլ, բասկետբոլ, բասկետբոլիստ, վոլեյբոլ, վոլեյբոլիստ, թենիս, թենիսիստ, սամբո, ձյուդո և այլն: Այդ կարգի բառերի և տերմինների զգալի մասը յուրացվել կամ յուրացվում է հայերենում:

Այնուամենայնիվ նորագույն փոխառությունների զգալի մասը իբրև տարբեր բնագավառներին վերաբերող մասնագիտական տերմիններ ավելի շատ գործածվում են համապատասխան բնագավառներում, բնականաբար մասնագիտական գրավոր խոսքում և արդի գրական հայերեւելի բանավոր լեզվում լայն գործածություն չունեն: Այդ կարգի բառերի գործածությունն արդարացվում է համապատասխան մասնագիտական գրականության մեջ ունեցած իրենց դերով:

Նշված կարգի բառերից բացի արդի գրական հայերեւելի արևելահայ տարբերակում կարելի է առանձնացնել մեծ խումբ փոխառյալ բառեր, որոնք մասնագիտական գրականության մեջ դիտվում են իբրև օտար բառեր: Դրանք կյանքի, գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող օտարազգի այն բառերն են, որոնք այլևայլ պատճառներով չեն յուրացվում հայերենում և մեկուսանալով՝ աստիճանաբար դուրս են մղվում բառապաշարից, ինչպես՝ մերսի, պարդոն, մադամ, մադմուազել, ֆրաու, ֆրոյլին, լեդի, միլե-

<sup>1</sup> Նկատի ունենք մեր հեղինակակցությամբ տպագրության ընթացքում գտնվող «Օտարազգի բառերի բառարանի» տվյալները:

դի, դենգի, հեր, միսս, միսսիս, միստր, միլորդ, սենյոր, մոնսեյնյոր, սինյորիսա, ջենտլմեն, պոլիսմեն, շերիֆ, բուպո, ջինս, հոլիդեյ, սոմբրերո, կիմոնո, մոկասիմ և այլն:

Ինչպես հայտնի է, բառային փոխառությունների հիմնական պատճառը հատկապես առաջավոր, զարգացած երկրներում մշակույթի, գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի առաջընթացի հետևանքով հիմնականում եվրոպական լեզուներում նորանոր հասկացությունների առաջացման հիման վրա համապատասխան նոր տերմինների և բառերի երևան գալն է: Նոր հասկացությունների հետ անհրաժեշտություն է զգացվում նաև համապատասխան բառերի փոխառությունը տարբեր լեզուներում, այդ թվում նաև արդի հայերենում: Այս ընդհանուր օրինակափոխությունը, սակայն, մեր կարծիքով, հայերենի համար բացարձակ օրենք չպետք է համարել: Հայերենի բառակազմության հարուստ միջոցները ոչ միայն տեսականորեն, այլ գործնականորեն ի վիճակի են լեզվի զարգացման արդի փուլում հիմնականում ռուսերենի միջոցով կատարվող բոլոր բառային փոխառությունների համար կերտելու սեփական բառային միավորներ, որոնք հաջողությամբ կարող են փոխարինել նորագույն ցանկացած փոխառություններին: Այս թեզը հաստատող փաստերը վերջին տասնամյակներում բազմաթիվ են, ուստի և կարելի է սահմանափակվել մի քանի հանրահայտ օրինակներով: Վերջին տասնամյակներում տիեզերագնացության աննախընթաց զարգացման հետևանքով ռուսերենում ու եվրոպական լեզուներում ստեղծված և երևան եկած բոլոր տերմինների ու բառերի համար ներկայացվել և կերտվել են հայերեն համապատասխանությունները, ինչպես՝ արբանյակ (спутник), տիեզերագնավ (космический корабль), տիեզերագնաց (космонавт), աստղանավորդ (астронавт), տիեզերագնացություն (космонавтика), լուսնագնաց (лунныйход), տիեզերակապ (космическая связь) և այլն:

Այդ առումով անհրաժեշտ է նշել, որ փոխառությունների փոխարինումը սեփական բառերով արդի հայերենում ոչ թե հազվադեպ, պատահական երևույթ է, այլ անընդհատ, շարունակական անհրաժեշտ գործընթաց: Վերջինիս ապացույցն է աշխարհի բազմաթիվ լեզուներում արդեն մուտք գործած և տարածված կոմպյուտեր բառի համար հայերենում ըստեղծված **համակարգիչ**, մեր կարծիքով, միանգամայն հաջող համապատասխանությունը:

Այսպիսով, արդի գրական լեզվի արևելահայ տարբերակում սկզբունքորեն որևէ դժվարություն չկա նորագույն փոխառությունները փոխարինելու ազգային համապատասխանությամբ:

Այժմ օրինական հարց է ծագում, թե ինչո՞վ պետք է բացատրել արևելահայ գրական լեզվի արդի փուլում ավելի քան տասը հազար նորագույն փոխառությունների առկայությունը:

Նախ, ամմիջապես պետք է նշել, որ այդ կարգի բառերի զգալի մասի համար իրոք կերտվել և գոյություն ունեն հայերեն համազորները: Խնդիրն այն է, որ ինչ-ինչ պատճառներով դրանց որոշ մասը չի փոխարինում կա՛մ չի կարող փոխարինել փոխառություններին:

Վիճակագրական մեր տվյալներով նշված նորագույն փոխառությունների մոտ 70 %-ը արդի արևելահայ գրական հայերենում ունեն իրենց համապատասխան հայերեն բառային համազորները: Վերջիններս փոխառություններին լիարժեք կերպով փոխարինելու տեսակետից միարժեք չեն կարող համարվել: Այս տեսակետից ըստ փոխարինելության աստիճանի անհրաժեշտ է տարբերել այդ կարգի հայերեն բառերը:

ա) Առաջին խմբի մեջ պետք է դասել հայերեն այն համազորները, որոնք իմաստով, կազմությամբ, բարեհնչությամբ արդեն փոխարինում են, և, մեր կարծիքով, այդ կարգի բառերի մյուս մասն էլ անվերապահորեն կարող է փոխարինել նորագույն համապատասխան փոխառություններին:

1) Արդի արևելահայերենի գրավոր խոսքում նորագույն փոխառությունների փոխարեն քաջատապես գործածվող հայերեն լիարժեք համազորներից կարելի է հիշատակել, օրինակ՝ հյուրախաղ (գաստրոլ), լուսամփոփ (աբաժուր), պարբերություն, տողազուխ (աբզաց), ձողնդարձ (աբլատտ), անհերթ, անհերթություն (աբսուրդ), կենսաբան (բիոլոգ), կենսաբանություն (բիոլոգիա), կենսոլորտ (բիոսֆերա), բանասեր (ֆիլոլոգ), բանասիրություն (ֆիլոլոգիա), կատակերգություն (կոմեդիա), ողբերգություն (տրագեդիա), վեպ (ռոման), վիպասան (ռոմանիստ), դյուցազներգ, դյուցազներգություն (էպոպեա), պարակամոն (ապոկրիֆ), հովվերգություն (իդիլիա), արկածախնդիր (ավանտյուրիստ), արկածախնդրություն (ավանտյուրա), հարցաթերթիկ (անկետա), քննադատություն (քտանիկա), վտարանդի (էմիգրանտ), սրտագիր (կարդիոգրամա), սրտագրիչ (կարդիոգրաֆ), սրտազերություն (կարդիոգրաֆիա), սրտաբան (կարդիոլոգ), սրտաբանություն (կարդիոլոգիա) և այլն: Այս և նման հայերեն շատ համազորներ, որոնք հաջողությամբ փոխարինել են ոչ հեռավոր անցյալում արդի գրական հայերենում գործածվող փոխառյալ բառերին, որոշ ժամանակ իբրև զուգահեռ ձևեր գործածվում են վերջիններս հետ: Անհրաժեշտ է նկատի առնել, որ այս շարքի հայերեն որոշ բառեր արդի գրական հայերենին ժառանգվել էին հին գրական հայերենից. ինչպես՝ կատակերգություն, ողբերգություն, անհերթ, անհերթու-

թյուն, պարբերություն, դյուցազներգություն, դյուցազներգ, պարականոն և այլն: Հայերեն բառերի մյուս շարքն էլ իբրև համագործեր կազմվել էին, քայց նախորդ հայերեն բառերի նման երկար ժամանակ չէին գործածվում իբրև համապատասխան փոխառյալ բառերի համանշանակ, կամ էլ՝ լավագույն դեպքում գործածվում էին այդ կարգի բառերի հետ զուգահեռաբար: Մեր կարծիքով, այդ երևույթը պետք է բացատրել խորհրդային իշխանության տարիներին ինչպես հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի տարբեր բլանզավառներում իշխող վարչափրամանատարական կարգի և դրանից բխող խորհրդային ժողովուրդների լեզուների նկատմամբ մշակված և կիրառվող լեզվական ընդհանուր քաղաքականությունից: Այդ շրջանում իշխող գաղափարախոսությունն էր դարձել խորհրդային ժողովուրդների ազգային լեզուների աստիճանական մահացման, կոմունիստական հասարակարգում մեկ ընդհանուր, միասնական լեզվի հաղթանակի հակագիտական թեզը: Օրվա կարգախոսն էր և ամեն կերպ խրախուսվում էր ազգային լեզուների բառային կազմում այսպես կոչված «ինտերնացիոնալ» բառապաշարի կարծեցյալ առավելությունները: Ոգևորվելով նման հարցադրումից՝ Հայաստանում գտնվեցին առանձին մարդիկ, որոնք օտարազգի բառերի թարգմանությունը, այդ կարգի բառերի դիմաց հայերեն համագործերի ստեղծումը որակում էին ոչ ավել, ոչ պակաս, քան տեղական նացիոնալիզմ: Այդ կարգի վայ-մասնագետները կարող էին որոշ չափով պղտորել հայերենի լեզվաշինական մթնոլորտը, քայց խոչընդոտել կամ ընդհանրապես խանգարել արդի գրական արևելահայերենի լեզվական բնականոն գործընթացին՝ չէին կարող, քանի որ լեզվի առաջընթաց զարգացումը կասեցնել հնարավոր չէ:

բ) Երկրորդ խմբի մեջ պետք է դասել հայերեն այն բառերը, որոնք լեզվի կենսագործունեության ժամանակակից փուլում հավասար հիմունքներով զուգահեռաբար գործածվում են նորագույն փոխառյալ բառերի հետ: Այդ կարգի բառերը զգալի տոկոս են կազմում և վերջիններիս նրանց հայերեն համագործերով փոխարինումը, մեր կարծիքով, արդեն հատուցել է և առաջիկայում կարող է իրական փաստի վերածվել:

Արդի գրական արևելահայերենում փոխառյալ և ազգային ձևերի (սեփական բառերի) զուգահեռ գործածության օրինակները բավականին շատ են. ինչպես, օրինակ՝ դիմորդ—արիտորիենտ, բաժանորդ—արճենտ, վերացապաշտություն—աբստրակցիոնիզմ, վերացապաշտ—աբստրակցիոնիստ, երաժշտանոց—կոմսերվատորիա, մարզադաշտ—ստադիոն, երկընտրանք, երկընտրություն—ալտերնատիվ, այլասիրություն—ալտրոիզմ, այլասեր—ալտրոիստ, համաբանություն—անալոգիա, բռնակցում—անքսիա, բռնակցորդ—անքսիոնիստ, բնաշրջություն, բնաշրջում—էկոլոյոցիա, ամբոյավար—դեմագոգ, ամբոյավարություն—դեմագոգիա, շրջափակում—բլոկադա, ապրուստադրամ, կերակրադրամ—ալիմենտ, աչքաբերություն—ալեգորիա, բուժարան—ամբուլատորիա, կազմակառուցություն—անատոմիա, բնակառություն—ֆիզիոլոգիա, կազմակառուցում—անատոմիա, բնակառու—ֆիզիոլոգ, փտախոս—գանգրենա, առավելածաբանություն—թեոլոգիա, հարակապություն—ինտերցիա, մարդաբան—անթրոպոլոգ, մարդաբանություն—անթրոպոլոգիա, նարինջ—ապելսին, ախտորոշում—դիագնոզ, զծայատկեր, տրամագիր—դիագրամ, երկխոսություն, տրամախոսություն—դիալոգ, ներքնաբույժ—թերապևտ, ներքնաբուժություն—թերապիա, տիեզերաբանություն, տիեզերագիտություն—կոսմոլոգիա, մեղմասություն—էվֆեմիզմ և այլն:

Վերլուծելով այս կարգի բառերի ցանկը՝ դժվար չէ եզրակացնել, որ հայոց լեզվի շահերը և ընդհանրապես գրական լեզվի զարգացման արդի փուլի միտումը հայերեն համագործերի վերջնական հաղթանակն է փոխառյալ բառերի նկատմամբ: Այդ գործընթացին նրապատող գործոնները հետևյալն են.

ա) փոխառյալ բառերի հայերեն համագործերը իմաստային տեսակետից ավելի հասկանալի, հետևաբար և դյուրամատչելի են հայերեն խոսող և գրող հանրությանը:

բ) Այդ կարգի բառերն իրենց հնչյունական կազմությամբ և իմաստով հեշտությամբ ընկալվելով, առանց որևէ դժվարության կարող են մուտք գործել բառապաշար, մտնել հոմանիշա-հակահիշային հարաբերությունների մեջ և կազմել արդի հայերենի իմաստաբերականական համակարգի քաղցրահամ և խոսքի տարր:

Մյուս կողմից՝ հայերենի նորագույն փոխառությունների զգալի մասը վերոհիշյալ հատկանիշների, ավելի ճիշտ՝ արժանիքների բացակայության պատճառով, երկար ժամանակ մեկուսանալով և ի վերջո տեղի տալով ազգային ձևերին, աստիճանաբար դուրս են մղվում լեզվից:

Փոխառյալ բառերի հանդեպ ազգային ձևերի՝ համագործերի արժանիքներից մեկն էլ անշուշտ, իմաստային որոշակի տարբերակումն է: Այսպես՝ փոխառյալ անտրեստը ճարտարապետական տերմինը իբրև բազմիմաստ բառ մի քանի առանձին, անկախ իմաստներ է պարունակում և հայերեն գործածելիս դժվար է տարբերակել այդ իմաստները: Մինչդեռ հայերեն՝ 1) միջնահարկ, 2) կիսահարկ, 3) կրկնահարկ առանձին բառերը հաջողությամբ

կարող են փոխարինել ինչպես **անտրեսոլ** բառի բոլոր այդ իմաստներին, այնպես էլ բառին ամբողջությամբ: Նույն ձևով նաև՝ **ասիմիլացիա** փոխառությունը վերաբերում է մի քանի բնագավառների և համապատասխանաբար ունի հայերեն իր համանշանակ—համագործերը. 1. ձուլում (ժողովրդի), 2. յուրացում (կենսաբանության մեջ), 3. առնմանում (լեզվաբանության մեջ). կամ՝ **գրաֆիկա**—1. գծանկարչություն (արվեստի բնագավառ). 2. գրաբանություն (լեզվաբանության գիտաճյուղ), **անալիզ**—1. վերլուծություն, 2. տարրալուծում և այլն: Դժվար չէ նկատել, որ նման դեպքերում ազգային ձևերը միանգամայն արդարացնում են իրենց, և այս դեպքում սեփական բառերի կազմումն ու գործածումը կենսական անհրաժեշտություն է:

Վերջերս նկատվում է որոշ միտում. կատարվում է այլևայլ պատճառներով արդեն օտարված մի շարք հայերեն բառերի վերակենդանացում: Այդ կարգի բառերն օգտագործում են իբրև լեզվում արդեն ընդունված համապատասխան փոխառյալ բառերի կիրառելի համագործեր: Այսպես՝ հայերենի **նախարար**, **նախարարություն** բառերը արդի գրական արե՛զելահայերենում համարվում են հնաբանություններ և գործածական են միայն արևմտահայերենում: Այժմ նշված բառերը հաճախ են երևան գալիս պարբերական մամուլում իբրև փոխառյալ **մինիստր**, **մինիստրություն** բառերի համագործեր: Չի բացառվում, որ այդ բառերը հետագայում լայն գործածություն ստանալով՝ ձեռք բերեն քաղաքացիության իրավունք պաշտոնական կիրառության համար: Այժմ լեզվում ընդունված **մինիստրների խորհուրդ** կապակցությունը կարող է դառնալ **նախարարների խորհուրդ**: Մեր կարծիքով, նույն բախտին կարող են արժանանալ նաև **համայնավար**, **համայնավարություն**, **ընկերավար**, **ընկերավարություն** բառերը հայերենում գործածվող համապատասխան **կոմունիստ**, **կոմունիզմ**, **սոցիալիստ**, **սոցիալիզմ** բառերի փոխարեն: Նշված փոխառությունների հայերեն համագործերը, ինչպես հայտնի է, երկար ժամանակ մերժվել է միայն այն պատճառաբանությամբ, որ դրանք իբր աղավաղում, աղճատում են կամ լրիվ չեն արտահայտում **կոմունիստ**, **կոմունիզմ**, **սոցիալիստ**, **սոցիալիզմ** բառերի իմաստային բովանդակությունը: Իմաստային, կիրառական տեսակետից, մեր կարծիքով, հայերեն համանշանակները բնավ էլ չեն աղճատում այդ հասկացությունների իմաստները և որպես ազգային ձևեր ավելի մատչելի են հայերեն խոսող հանրությանը:

Հետաքրքրական է, որ վերջերս հատկապես բանավոր խոսքում և ոչ պաշտոնական շրջանակներում **դեպուտատ** և **պառլամենտ** օտարազգի բառերի փոխարեն սկսել են գործածել **երեսփոխան** և **խորհրդարան** հայերեն համագործերը: Անհրաժեշտ է նշել, որ դրանց գործածությունը թեև գրական արևմտահայերենում օրինականացված է, բայց գրական արե՛վելահայերենը նախապատվությունը տվել է փոխառյալ ձևերին: Ելմարտությունը, սակայն, պահանջում է անել նաև, որ փոխառյալ **դեպուտատ** բառի համար արևելահայ գրական լեզվում Հայկ. ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տեղմի՞նստանական կոմիտեի<sup>2</sup> 1966 թ. մայիսի որոշման համաձայն հանձնարարվել է **պատգամավոր** բառը, որը ինչ-ինչ պատճառներով մերժվում է առ այսօր: Երևի դրա պատճառը **պատգամավոր** և **պատվիրակ** տարբեր բառերի, հետևաբար և տարբեր իմաստների նույնացումն է, որ շփոթության տեղիք է տրվել: Մինչդեռ **պատգամավորը**, ինչպես նշվեց, օտարազգի **դեպուտատ** բառի համագործ է, **պատվիրակ** բառը՝ դե՛լեգատի: Սկզբունքորեն դեմ չլինելով **երեսփոխան** հայերեն համագործի վերականգնմանը, կարծում ենք, որ այդ հարցում նախապատվությունը այնուամենայնիվ պետք է տալ արդեն հաստատված **պատգամավոր** հայերեն ձևին: Ինչ վերաբերում է փոխառյալ **պառլամենտ** և ազգային **խորհրդարան** ձևերին, մեր կարծիքով, առ ժամանակ պետք է թույլ տալ դրանց զուգահեռ գործածությունը, մինչև դրանցից մեկի պաշտոնական ընդունումը:

Այդ կապակցությամբ անհավանական չէ, որ մոտ ապագայում հարց բարձրանա օտարազգի **սենատ**, **սենատոր** բառերը փոխարինել **ծերակույտ**, **ծերակուտական** ազգային ձևերով:

Ավելորդ չէ նշել նաև, որ հայերենում հին ձևերի վերականգնման գործընթացի հետ կատարվում է նաև հակառակ երևույթը, երբ փոխառյալ բառի արդեն ընդունված հայերեն համագործը մերժվում և նախապատվությունը վերստին տրվում է փոխառությանը: Խոսքը վերաբերում է հայերեն **մարգարաշտ** բառին, որը, մեր կարծիքով, իբրև համագոր լիովին փոխարինում էր փոխառյալ **ստադիոն** ձևին: Մեզ անհասկանալի պատճառներով այժմ մամուլում պաշտոնապես սկսել է գործածվել փոխառությունը և դուրս է մղվել ազգային ձևը:

Օտարազգի բառերը ազգային համագործ ձևերով փոխարինելու հարցում նկատվում են նաև զուտ լեզվական որոշ դժվարություններ: Այդ առաջին հերթին վերաբերում է փոխառյալ նույն բառի համար հայերեն մեկից ավելի համագործների կամ հոմանիշների առկայու-

<sup>2</sup> Տե՛ս Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 1988, էջ 198:

թյանը: Արդի գրական արևելահայերենում պատկանելի թիվ են կազմում օտարազգի նույն բանի համար կազմված մեկից ավելի հայերեն համազորները. այսպես, օրինակ՝ **էքսկուրսիա**—արտաշրջություն, տարաշրջություն, գրոսարշավ, **ավտոնոմիա**—ինքնավարություն, **ինքնօրինություն**, **ավտոնոմ**—ինքնավար, **ինքնօրեն**, **կոսմոլոգիա**—տիեզերաբանություն, **տիեզերագիտություն**, **ալիմենտ**—ապրուստադրամ, կերակրադրամ, **ալմանախ**—հատընտիր, **ծաղկաքաղ**, **անգինա**—բկացավ, բկաբորբ, կոկորդաբորբ, **անտեննա**—ալեհավաք, ալեցիր, **աբորիզեն**—բնիկ, նախաբնիկ, հնաբնակիչ, անդրածին, **աբորտարիում**—վիժասենյակ, վիժարան, **աբուլիա**—կամազրկություն, թուլակամություն և այլն: Այդ դեպքում օտարազգի բանի համար կազմված մեկից ավելի ազգային համազորները ոչ թե օգնում, այլ պարզապես խանգարում, խոչընդոտում են ազգային ձևի գործածությանը: Երբ փոխառյալ բանի դիմաց առաջարկվում է մեկից ավելի համազոր, անհրաժեշտ է, նախ՝ ընտրություն կատարել դերանց միջև: Լեզվական տարբեր ճաշակների պատճառով բնականաբար բացառվում է բոլորի կողմից հայերեն նույն համազորի ընտրությունը, և օտարազգի բանի փոխարեն Ռայերեն հոմանիշ տարբեր բաների գործածությունն էլ ի վերջո նպաստում է այդ պարագաներում նախապատվությունը տալ փոխառյալ բանին: Իհարկե այս հարցում անհրաժեշտ է դառնում Տերմինաբանական կոմիտեի միջամտությունը: Բայց այս դեպքում էլ չի բացառվում օտարազգի բաների հայերեն համազորների գնահատման, ընտրության և հանձնարարության սուբյեկտիվ մոտեցումը:

Այսպես՝ հայերեն **տիեզերաբանություն** և **տիեզերագիտություն** (կոսմոլոգիա), **թուլակամություն** և **կամազրկություն** (աբուլիա) բաներից որպես համապատասխան օտարազգի բաների համազորներ որի՞ն անվերապահորեն նախապատվությունը տալ: Դժվար է ընտրություն կատարել, օրինակ, հայերեն՝ **բնիկ**, **նախաբնիկ**, **հնաբնակիչ**, **անդրածին** բաների միջև իբրև **աբորիզեն** փոխառյալ բանի գործածական համազոր: Եթե այս շարքից որպես ոչ կատարյալ համազոր ընտրության առաջին փուլում դուրս թողնենք **հնաբնակիչ** համանշանակը, մնացած հայերեն երեք համազորների մեջ ընտրություն կատարելը, մեր կարծիքով, դյուրին գործ չէ: Այս կարգի փաստերը հուշում են, որ օտարազգի բաների համար հայերեն համազորներ կերտելիս՝ սկզբից նեթ պետք է հրաժարվել հոմանիշներից, այսինքն՝ օտարազգի մեկ բանի համար կազմել և առաջարկել բացառապես հայերեն մեկ համազոր: Որոշ դեպքերում դժվար չէ ընտրություն կատարել և հրաժարվել անհաջող հոմանիշներից, ինչպես, օրինակ՝ **հետաաներում** և **առհավություն** (ատավիզմ) համազորներից **առհավություն** բանից պետք է հրաժարվել և նախապատվությունը տալ **հետաաներում** համազորին:

Մյուս կողմից՝ պետք է խուստովանել, որ հայերենում փոխառյալ բաների մեկից ավելի ազգային համազորները անմիջապես չեն կազմվում: Որպես օրենք դրանք երևան են գալիս իրարից անկախ, տարբեր ժամանակներում և տարբեր աղբյուրներում: Հետևաբար հետազայում ևս դժվար է խուսափել օտարազգի բաների հայերեն հոմանիշներից:

Մեր կարծիքով, հոմանիշներից մեկի ընտրությունը իբրև օտարազգի բանի հայերեն համազոր պետք է կատարվի ժամանակի ընթացքում, լեզվի զարգացման գործընթացում բնական ընտրության ճանապարհով:

Այսպիսով, ժամանակակից արևելահայ գրական լեզվի զարգացման արդի փուլում օտարազգի բաների, ավելի ճիշտ՝ նորագույն փոխառությունների հարցում միտումը սեփական, ազգային համազորների գործածությունն է: Այդպիսի հնարավորություն տալիս է հայերենի բառային կազմի ներքին հնարավորությունները և, առաջին հերթին, հայոց լեզվի բառակազմական միջոցների հարստությունը: Այդ առումով արդեն առկա են արտաքին և ներքին նպաստավոր բոլոր պայմանները արդի գրական հայերենի նորագույն փոխառությունների զգալի մասը ազգային ձևերով՝ համազորներով փոխարինելու համար:

Օտարազգի բաների այսպես կոչված «հայացման» միջոցներից մեկը բաղադրիչներից մեկի թարգմանությունն է. ինչպես, օրինակ՝ **աստրոֆիզիկա**—**աստղաֆիզիկա**, **գեոքիմիա**—**երկրաքիմիա**, **բիոֆիզիկա**—**կենսաֆիզիկա**, **բիոքիմիա**—**կենսաքիմիա**, **ալիադեսանտ**—**օդադեսանտ**, **ավիանոտոր**—**ավիաշարժիչ**, **կինոկոմեդիա**—**կինոկատակերգություն**, **գեներալ**—**գնդապետ** և այլն:

Նորագույն փոխառությունների հայերեն համազորներով փոխարինելու հարցում, մեր կարծիքով, օրակարգում է որոշ հարցերի լուծումը:

Այսպես, փոխառյալ երաժշտական որոշ տերմինների իմաստներից մեկը թարգմանվում է հայերեն, մյուս մասը՝ ոչ. ինչպես, օրինակ՝ **կոնցերտ** բանի ընդհանուր իմաստի հայերեն համազորն է՝ **համերգ**: Նեղ իմաստով, իբրև երաժշտական ստեղծագործության որոշակի տեսակ, դաշնամուրի, ջութակի, թավջութակի և այլն **համերգի** փոխարեն գործածվում է **կոնցերտ**: Կամ՝ **տրիո**, **կվարտետ**, **կվինտետ**, **սեքստետ** փոխառյալ բաները հայերենում գործածվում են իբրև երաժշտական որոշակի տեսակների անվանումներ, իսկ **կատարողների խմբի** իմաստով գործածվում են հայերեն համապատասխան համազորները՝ **տրյակ**, **քառ-**

յակ, հնգյակ, վեցյակ: Մեր կարծիքով, նշված փոխառյալ բառերի առաջին իմաստի համար նույնպես պետք է դիմել հայերեն համանշանակներին, համապատասխանաբար օգտագործել եռանվագ, քառանվագ, հնգանվագ, վեցանվագ բառերը: Համեմայն դեպս այդ իմաստների համար անհրաժեշտ է կազմել հայերեն համազորներ:

Օտարազգի որոշ բառեր արդի գրական արևելահայերենում շարունակվում են գործածվել դրանց հայերեն համապատասխան համազորների բացակայության կամ եղածների ոչ հաջող լինելու պատճառով:

Այսպես, մաթեմատիկական հայտնի կոսեկանս, կոսինուս տերմինների համար հայերենում կազմվել են համապատասխան հատանողակից և ծոցակից բառերը, որոնք լեզվում քաղաքացիության իրավունք ձեռք չեն բերել:

Քիչ չեն նաև օտարազգի այնպիսի բառեր, որոնք սովորաբար թեև չեն թարգմանում, բայց և չի բացառվում հետագայում դրանց հայերեն համազորների կազմումը, ինչպես՝ ազգորիթմ, աքսիոմ(ա), ասպիրանտ, ասպիրանտուրա, ատեստատ, մատերիալիզմ, իդեալիզմ, ինդետերմինիզմ, ինտուիտիվիզմ, ինտուիցիոնիզմ, ինտերնացիոնալ, ինտերնացիոնալիզմ, անթրոպոցենտրիզմ, անթրոպոսոցիոլոգիա, էքսպանսիոնիզմ, էքսպանսիոնիստ, տրեստ, սինգիկատ, կոնցեռն և այլ հասարակական-քաղաքական, փիլիսոփայական և այլ բնագավառների վերաբերող բազմաթիվ տերմիններ:

Այնուամենայնիվ, արդի գրական արևելահայերենում մնում են օտարազգի ոչ քիչ թվով բառեր, որոնք անթարգմանելի են և հնարավոր չէ կազմել այդ կարգի փոխառյալ բառերի հայերեն համազորներ: Անթարգմանելի օտարազգի բառերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

ա) Տարբեր երկրների, ժամանակների դրամական, չափի ու կշռի, էներգիայի և այլ միավորների անվանումներ. ինչպես՝ դոլար, ֆրանկ, ստեռլինգ, դիմար, գուդեն, լիրա, լե, լիվր, լուիդոր, լյան, կրոն, ռուպի, դոնգ, թալեր, իմպերիալ, էսկուդո, էրե, գրոշ, գրիվենգիկ և այլն, կամ՝ գրամ, կիլոգրամ, տոննա, ցենտներ, լիտր, մետր, սանտիմետր, միլիմետր, ակր, վերստ և այլն. ֆիզիկական տերմիններ՝ ամպեր, անգուստրեմ, ջոուլ, էրգ, գրեյ, կելվին և այլն:

բ) Աշխարհի ժողովուրդների անունները, ինչպես՝ արազիմ, ագուլ, ադիգեն, ավար, ացտեկ, բալկար, բաշկիր, ռուս, բելոռուս, բելուջ, գագաուզ, թաթար, թուրք, թուրքմեն, չուվաշ, կալմիկ, դազախ, ուզբեկ, տաջիկ և այլն:

գ) Կրոնական գաճազան բառեր և անվանումներ. ինչպես՝ իսլամ, դորամ, բալլամ, քուրդա, թալմուդ, լամա, դադալամա և այլն:

դ) Գրականության, արվեստի, երաժշտության, երաժշտական գործիքների և տարբեր ճյուղերին վերաբերող գաճազան հասկացություններ նշանակող բառեր. ինչպես՝ բարոկկո, գուաշ, իկերանա, ակրոստիքոս, բալլադ, պոեմ(ա), բելթ, գազել, թեմա, ժանր, լիրեռոս, բաս, բարիտոն, տենոր, սոպրանո, մեցո-սոպրանո, կոնտրալտո, ռեկլանտո, պլա, կարմետ, բայան, բալալայկա, բանդուրա, բանջո, դոլմա, գավոտ, գուալա, պեզո, ալաշիո, ալեմանդա, բուլերո, կանտելինա, թվիստ, վալլս, տանգո և այլն:

ե) Բժշկական գաճազան տերմիններ և հատկապես տարբեր դեղանուններ. ինչպես՝ ասպիրին, ակրիխին, ասկոֆեն, ինսուլին, կալցեքս, պեմիցիլին, ստրեպտոմիցին. կամ՝ գըրիպ, ինֆարկտ, իշիաս, սպիդ և այլն:

զ) Ազգային ճաշատեսակների անվանումներ, ինչպես՝ բորշ, շի, խարչո, չախոխբիլի, գուլյաշ և այլն:

է) ԽՍՀՄ-ում ընդունված զինվորական կոչումների անվանումներ. ինչպես՝ սերժանտ, լեյտենանտ, կապիտան, մայոր, գեներալ, մարշալ և այլն:

ը) Տարբեր երկրների քաղաքական, վարչական մարմինների, կուսակցությունների, ուսումնական հաստատությունների, ստորաբաժանումների, գիտական կոչումների և աստիճանների տարբեր անվանումներ. ինչպես՝ կոնգրես, բունդեստագ, բունդեսվեր, բունդեսբրաու, լանդստագ, լանդստիմգ, ստորտիմգ, կանտոն, լեյբրոիստ, լորդ, գիմնազիա, քոլեջ, լիցեյ, ինստիտուտ, տեխնիկում, ֆակուլտետ, դեկան, դեկանատ, դոցենտ, պրոֆեսոր, դոկտոր, բակալավր և այլն:

թ) Ոչ տեղական բույսերի, ծաղիկների, պտուղների, կենդանիների և այլն անուններ. ինչպես՝ մանդարին, գրեյպֆրուտ, բանան, լոտոս, կակաո, կակտուս, պիեզվին, գյուլզա (օձ):

ժ) Անձնանվան, տեղանվան, երկրի և այլ աշխարհագրական անունների հետ կապված քաղաքական, փիլիսոփայական և այլ հոսանքների անվանումներ, քիմիական տարբեր հանքատեսակների անուններ և այլն, ինչպես, օրինակ՝ լենինիզմ, մարքսիզմ, լամարկիզմ, ֆրեյդիզմ, բալլոնիզմ, բակունիզմ, բոնապարտիզմ, դարվինիզմ, բլանկիզմ, գանդիզմ, դալ-

տողիզմ, դատիզմ և այլն, կամ՝ ալեքսանդրիտ, պլասկիտ, բերկիտ, ամերիկոմ, եվրոպիտ, գերմանիտ, ինդիտ, գալիտ և այլն:

Ժա) Պատմական նշանակություն ունեցող տարբեր բնագավառի բառեր. ինչպես՝ կադետ, էսեռ, լակոբից, ժիրոնդիստ, լիկվիդատոր, լիզիտիցիզմ, դումա, էստոպ, գեմատով, ասաման և այլն:

Ժբ) Մարզական, ընդ որում ազգային մարզաձևեր ներկայացնող անվանումներ. ինչպես՝ ձյուդո, սամբո, բեյսբոլ, բոքսեյ, գորոդկի, թենիս, դոմինո և այլն: Առ այսօր չեն թարգմանվել նաև հանրահայտ ֆուտբոլ, ֆուտբոլիստ, բասկետբոլ, բասկետբոլիստ, վոլեյբոլ, վոլեյբոլիստ նման մի քանի փոխառություններ:

Ժգ) Գիտության, տեխնիկայի տարբեր բնագավառներին վերաբերող նոր հասկացություններ արտահայտող, ինչպես նաև նեղ մասնագիտական տերմիններ. ինչպես, օրինակ՝ կնֆորմատիկա, կիրեռնետիկա, բայտ և այլն, կամ՝ բետոն, ցեմենտ, շիֆեր, բենտոնիտ, կամ՝ բենզին, բենզոլ, ացետոն, բարիում, կալիում, կալցիում, իտրիում, իպրիտ, լուիզիտ, ադալին, ադենին, ալանին, ֆենոլ, ադրենալին, քլորոպրեն, ադրոն, քվանտ, իզոտրոպ, կապրոն, նեյլոն, նիլոն, դեդերոն և այլն:

Այս կարգի բառերի դասակարգումը, բնական է, սպառիչ չի կարող լինել, թեև այն կարող է որոշ գաղափար տալ դրանց թարգմանության դժվարության և նույնիսկ անհնարինության մասին: Այս հարցում, իհարկե, քացառություններ կան: Այսպես, չի քացառվում հատուկ անուններով կազմված ժ կետում բերվող անվանումների ու բառերի մասնակի թարգմանությունը հայերեն ածանցներով կամ քաղադրիչներով. ինչպես, օրինակ՝ դարվինիզմ-դարվինականություն, բոնապարտիզմ-բոնապարտականություն, ֆրեյդիզմ-ֆրեյդալականություն և այլն. կամ՝ ալեքսանդրիտ-ալեքսանդրաքար, պլասկիտ-պլասկաքար և այլն:

Այսպիսով՝ բառային փոխառությունների անհրաժեշտությունն անխուսափելի է՝ անկախ լեզվի զարգացման մակարդակից, լեզվի բառային կազմի և բառակազմական ներքին հնարավորություններից ու միջոցների հարստությունից: Այն ինչպես աշխարհի բոլոր լեզուների, այնպես էլ ժամանակակից հայոց լեզվի կենսագործունեությունը խթանող գործոններից մեկն է: Հայերենը որպես հայկական հասարակական, քաղաքական, մշակութային, գիտատնտեսական կյանքի արտահայտություն՝ պարտավոր է այն ներկայացնելու ամբողջությամբ, նրա առաջընթացը, նրա ելևէջումները: Ինչպես ապրող ամեն մի ժողովուրդ, այնպես էլ նրա լեզուն ժամանակակից կյանքից մեկուսանալ չի կարող: Այնպես որ խոսք լինել չի կարող ընդհանրապես բառային փոխառություններից հրաժարվելու մասին:

Մեր քննությունը ցույց է տալիս, որ ժամանակակից գրական հայերենը հետևելով ավանդույթները, արդի փուլում նույնպես չի դադարում կատարել բառային փոխառություններ:

Նախ՝ այդ փոխառությունները անմիջապես մուտք չեն գործում հայերենի բառապաշարը, մյուս կողմից՝ դրանց զգալի մասը վերաբերում է մասնագիտական բառապաշարին, հետևաբար և լեզվում լայն գործածություն չունի: Վերջապես, ժամանակի ընթացքում լեզվի ներքին հնարավորություններով կազմվում են օտարազգի բառերի հայերեն համազորները, որոնք անմիջապես կամ աստիճանաբար փոխարինում են դրանց: Այդ գործընթացին այժմ մեծապես նպաստում են հանրապետությունում ծավալված լեզվաշինարարական աշխատանքները կադեմիական և քուրսական համապատասխան հաստատությունների, հանրապետական մամուլի, ուղիորհեռուտատեսության, Հայկական ԽՍՀ տերմինաբանական կոմիտեի գործունե մասնակցությամբ:

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների մերձեցմանը կարող է նպաստել արևմտահայերենում գործածվող մի շարք բառերի՝ որպես օտարազգի համապատասխան բառերի հայերեն համազորների (նախարար, խորհրդարան, համայնավար, ընկերավար ևն) մուտքը գրական արևելահայերեն:

**Г. А. СУКИАСЯН—Новейшие заимствования современного армянского языка, вопрос их перевода и армянских эквивалентов.—** Словарные заимствования неизбежны независимо от уровня развития языка, лексического состава, внутренних словообразовательных возможностей и богатства средств языка. Они являются действительным стимулом жизнедеятельности любого языка. Усвоение заимствований в разных сферах языка—сложный процесс, способствующий ныне развернувшейся в республике языкотворческой работе при активном участии соответствующих академических и вузовских заведений, печати, радио и телевидения. Терминологического комитета Арм. ССР С другой стороны, сближению западноармянского и восточноармянского литературных языков способствует усвоение в литературном восточноармянском ряда слов из западноармянского в качестве синонимов ранее заимствованных вностранных слов.